

կած չի վերցնել: Վերև յիշուած Յիշատակարանին «Զծնողս իմ տեսի մեռաւ» տողը ապահովաբար ակնարկութիւն է Երեմիայի մօր՝ Յուդիտայի, որ կը վախճանի 1663 տարուան մէջ, ինչպէս կ'երևի այդ առթիւ անոր վրայ իր յօրինած Գանձի վերնագիրէն⁽¹⁾: Երեմիայի Վիպասանութիւն յԱպրօ Զեկեպի աշխատութեան մէջ՝

«Եւ բող մահու կսկծարեւ մեզ հանդիպեալ,

Ծնողիս մերոյ յանկարծ ուրեմըն վախճանեալ», տողերուն մասին Տոքթ. Թորգոմեան շատ իրաւացիօրէն կը գրէ. «Ծնողիս մերոյ բառերէն առաջին ակնարկով կարելի է Տէր Հայրը հասկնալ, բայց Մայրն է վախճանողը»⁽²⁾:

Այսպէս՝ ճշգուշելով Տէր Մարտիրոսի մահուան տարին (1681 Յունուար՝ հաւանաբար), անիկա քահանայագործած կը լինի 43 տարի ու քանի մը ամիս: Զեռնագրուած էր 1637 տարուան աշունին Երուսաղէմի մէջ, Գրիգոր Պարոնտէր պատրիարքէն:

Տէր Մարտիրոս ունեցած է նաև ամուսնացեալ քոյր մը, զոր Երեմիա երկու անգամ կը յիշէ իր Օրագրութեան մէջ, առանց անունը տալու: 1656 Ապրիլ 26. «Օրս երրորդում՝ փեսայ հօրհուրիս ի տուն բերին փեսագարձ»: — 1656 Մայիս 15. «Եկաք ընդ Մղտեսուն և ընդ Մաղդօշին՝ փեսային հօրհուրին իմոյ՝ ի Սուրբ Նիկողոս, ևայլն»:

Բ. ՄԱՀՏԵՍԻ ԱՄԲԱԿՈՒՄ. — Ասոր հետաքրքրական ու արժէքաւոր մէկ յիշատակը ցարդ կը պահուի մեր Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ: Այս մասին կու տանք հետեւեալ լուսաբանութիւնը:

(1) Յուշուած, էջ 611: Հմմտ. Թորգոմեան էջ 721, Ա. կինեան էջ 28, Սիոն, էջ 278-80:

(2) Առաջօլոյց Պատմութիւն, էջ 721-22: